ՀՏԴ 32 (479.243)

Քաղաքագիտություն

Ալեքսանդր Մանասյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Հակամարտությունների միջազգայնացման տեսանկյունները

Հոդվածը նվիրված է 1918-1920 թթ. և ԽՍՀՄ լուծարումից հետո Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման միջազգայնացման երկու ձևաչափերի համեմատական վերլուծությանը: Այդ ձևաչափերը ցույց են տալիս կոնֆլիկտի փոխակերպումների ուղղությունը նրա հարյուրամյա պատմության ընթացքում: Առանձնացված են դիտարկվող միջազգային ձևաչափերի կարգավիճակների իրավաքաղաքական տարբերությունները: Ի տարբերություն 1918-1920 թթ. այժմ կոնֆլիկտը միջազգային հանարության կողմից չի դիտվում որպես Հայաստանի և Ադրբեջանի տարածքային վեճ: Կոնֆլիկտի կարգավորման գործընթացում ներբերված են միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներ, որոնք չկային 1918-1920 թվականներին: Ի տարբերություն XX դարի սկզբի այժմ կոնֆլիկտը հայտնվել է գլոբալ դերակատարների ռազմաքաղաքական հավասարակշռության դաշտում՝ երկարատև ստատուս քվոի ներուժով:

Բանալի բառեր *- Ղարաբաղյան կոնֆլիկտ, կոնֆլիկտի փոխակերպում, կոնֆլիկտի միջազգայնացում, էթնոքաղաքական կոնֆլիկտի կարգավորման միջազգայնացում, կոնֆլիկտի կարգավորման ձևաչափեր*

Александр Манасян
Член-корреспондент НАН РА

ПОЗИЦИИ МЕЖДУНАРОДНЫХ СИЛ ПО УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Аспекты интернационализации конфликтов

Статья посвящена сравнению двух форматов интернационализации урегулирования Карабахского конфликта, установившихся в 1918-1920 годах и после распада СССР. В этих форматах проявляется направление трансформаций в вековой истории конфликта. Выделены различия политико-правовых статусов рассматриваемых международных форматов урегулирования конфликта. В отличии от 1918-1920 гг. ныне международным сообществом конфликт не рассматривается как территориальный спор между Арменией и Азербайджаном. Под процесс урегулирование конфликта подведены фундаментальные принципы международного права, которых не было в 1918-1920 годах. В отличие от начала XX века конфликт ныне оказался в условиях военно-политического равновесия глобальных игроков с долговременным потенциалом стастус-кво.

Ключевые слова *– Карабахский конфликт, трансформация конфликта, интернализация конфликта, интернализация формата урегулирования этнополитического конфликта, международный формат урегулирования конфликта, форматы урегулирования конфликта*

Alexander Manasyan:
Corresponding member of NAS RA

POSITIONS OF INTERNATIONAL COMMUNITY IN THE SETTLEMENT OF THE KARABAKH CONFLICT

The Aspect of Internationalization Conflicts

The article is devoted to the comparison of the two formats of the internationalization of the settlement of the Karabakh conflict, established in 1918-1920 and after the collapse of the USSR. These formats show the direction of conflict transformation during its centennial history. The article highlights the political and legal differences in the status of the international formats for settling the conflict. In difference from 1918-1920. now the international community the conflict is not considered as a territorial dispute between Armenia and Azerbaijan. For the settlement of the conflict, the fundamental principles of international law are involved, which were not in 1918-1920. Unlike the beginning of the twentieth

century, the conflict has now found itself in the military-political equilibrium of global gamblers with a long-term potential for ststus quo.

Key words *- Karabakh conflict, conflict transformation, conflict internalization, internalization of the ethnopolitical conflict settlement format, international format of conflict settlement, conflict resolution formats*

Վերնագրում ձևակերպված հարցադրումը ենթադրվում է, որ հոդվածում տարբերակվում են «հակամարտության միջազգայնացում» և «հակամարտության կարգավորման միջազգայնացում» հասկացությունները: Տրված ձևակերպումներում դրանց իմաստները բավականաչափ թափանցիկ են և մանրամասն բացատրությունների կարիք չունեն: Հակամարտության միջազգայնացման տակ քաղաքագիտական հետազոտություններում սովորաբար հասկանում են երրորդ կողմերի ուղղակի մասնակցությունը զինված բախման տեսք ընդունած առճակատմանը: Մեր օրերում Սիրիայում տեղի ունեցող բախումները էթնոքաղաքական և կրոնական հիմքի վրա ծագած ներքին կոնֆլիկտի միջազգայանացման տիպական օրինակ են տրամադրում: Այդ ենթախորքի վրա հստակ առանձնանում է «հակամարտության կարգավորման միջազգայնացում» հասկացությանը վերագրվող իմաստային տարբերությունը: Այն մատնանշում է միջնորդների ու շահագրգիռ երկրների կամ միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը հիմնախնդրի քաղաքական, ոչ ուժային կարգավորման բանակցային գործընթացին: Որքան մեծ է շահագրգիռ կողմերի ու միջնորդների թիվը, այնքան միջազգայնորեն կարևոր է հիմնախնդրի: Կոնֆլիկտը կարող է սկսվել որպես զինված առճակատում և փոխակերպվել ու մտնել քաղաքական կարգավորման փուլ: Մեկ այլ դեպքում որպես խաղաղ (ոչ ուժային) կարգավորման ենթակա կոնֆլիկտը կարող է բորբոքվել-վերաճել զինված համամարտության, և այդ փոխակերպումներում կանխապես տրված ուղիներ չկան: Ոչ ուժային, բանակցային կարգավորման հանգրվանին հասած ոչ մի կոնֆլիկտ երաշխավորված չէ վերաբորբոքման ու զինված առճակաման փոխակերպվելու վտանգից: Սակայն բոլոր կոնֆլիկտներն էլ այսպես թե այնպես հանգուցալուծվում են բանակցային սեղանների շուրջ ձեռք բերված համաձայնություններով ու կնքված պայմանագրերով:

Մեր դիտարկման թեման Ղարաբաղյան կոնֆլիկտն է, որի շուրջ բանակցությունները ընթանում են ԵԱՀԿ հովանու տակ՝ նրա մանդատն ստացած Մինսկի խմբի անմիջական միջնորդությամբ: Իր հարյուրամյա պատմության ընթացքում կոնֆլիկտը հայտնվել է միջազգային քաղաքական ամենատարբեր շրջանակներում և ձևաչափերում, իրավական ամենատարբեր միջավայրերում, անցել է փոխակերպումներով, որ պայմանավորել են չընդհատվող դիմաբախության ձևերն ու ընթացքը: Հակամարտության կարգավորման մերօրիա միջազգային ձևաչափն ունի իր քաղաքական ենթախորքերը, որը հանգամալից դիտարկման կարիք ունի: Հոդվածը չի հավակնում դրանց ըստ ամենայնի ուսումնասիրությանը: Այն նպատակ ունի անդրադառնալ միայն որոշ ուղենիշային գաղափարների: Բայց նախ՝ հակիրճ այն փոխակերպումների մասին, որոնցով անցել է կոնֆլիկտը մինչև կհասներ կարգավորման միջազգայնացման այն հանգրվանին, որում դտնվում է:

Ռուսական կայսրության փլզումը և հայ-թաթարական էթնիկ բախումների վերաճումը էթնոքաղաքական հակամարտության Արևելյան Անդրկովկասի ազգային պետական կառուցվածքի շուրջ

Ղարաբաղյան կոնֆլիկտն ունի մեկ ամբողջ դարի պատմություն: Այն սկսվել է 1918 թվականին, երբ Անդրկովկաս խուժած թուրքական կանոնավոր բանակը հիմնել է մինչ այդ տարածաշրջանի պատմությանն անհայտ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն (ԱԴՀ) անունով խամաճիկային պետական գոյացություն, որը հարևաններին տարածքային հսկայածավալ և անհիմն պահանջներ է ներկայացրել: «Թուրքական քաղաքական նորածին երեխան»1 ի թիվս Բաքվից մինչև Բաթում ընկած այլ տարածքների հավակնում էր նաև Լեռնային Ղարաբաղին:

[1] Արտահայտությունը պատկանում է 1918 թ. Ադրբեջանի Ազգային խորհրդ նախագահ Մամեդ Էմին Ռասուլզադեին (մեջբերված է Михаил Волхонский, Вадим Муханов. «По следам Азербайджанской демократической Республики». М., 2007, գրքից, էջ146):

Մինչև թուրքերի Անդրկովկաս արշավելը տարածաշրջանում Ղարաբաղյան հակամարտություն որպես այդպիսին չի եղել: Ռուսական կայսրության գոյության վերջին երկու տասնամյակներում հենց կայսրության հրահրումով Արևելյան Անդրկովկասում բախումներ էին տեղի ունենում հայերի ու տեղի իսլամադավան ազգաբնակչության այն հատվածի միջև, որին ցարական Ռուսաստանը «մկրտել» էր կովկասյան թաթար անունով: Հայտնի է, որ տարածաշրջանի էթնոքաղաքական նկարագիրը ներկայացնելու համար կայսրությունը դեռևս XIX դարում շրջանառության մեջ էր դրել հայեր-մուսուլմաններ կաղապարը, ընդունելով այն փաստը, որ մի կողմից ազգային, իսկ մյուս կողմից դավանաբանական սկզբունքով առանձնացվող այդ համայնքներն են Արևլյան Անդրկովկասի ազգային ու տնտեսական կյանքի գլխավոր դերակատարները1: Սակայն կայսրության կողմից բախումները հասկանալի քաղաքական նկատառումներով հրահրվեցին ոչ թե Արևելյան Անդրկովկասի այդ երկու գլխավոր համայնքների՝ հայերի ու մուսուլմանների, այլ հայերի և կովկասյան թաթարների միջև2, որ տարածաշրջանի պատմության մեջ այն մտավ հայ-թաթարական բախումներ անունով: Կայսրության համակրանքը հայերի կողմը չէր: Նրա քաղաքական վերնախավերում տիրապետող էր այն մտայնությունը, որ սոցիալական ու քաղաքական գաղափարախոսություններից հեռու, տգետ, իր զգալի մասով դեռևս քոչվորի կյանք վարող ու վայրենի բարքերի տեր կովկասյան թաթարնին կարելի է օգտագործել պատժելու համար անկախ պետականության վերականգման տեսլականին հետևող և ազգային ու սոցիալական արդարության ու հակամիապետական շարժումների առաջին շարքերում գտնվող հայերին3: Այսպիսին էր 1905-1907 թթ. հայ-թաթարական բախումների քաղաքական ենթախորքը ցարիզմի կողմից հետապնդվող նպատակների դիտակետից4: Մեր թեմայի համար կարևոր է այդ դիտարկումներից բխող հետևյալ երկու իրողության արձանագրումը:

Առաջին: Այդ տարիներին ողջ Արևելյան Ահդրկովկասով ծավալված հայ-թաթարական բախումները զուտ էթնիկական բնույթ ունեին, քանի որ զինված բախումների մեջ ներքաշված կողմերը քաղաքական իշխանության կամ տարածաշրջանի ազգային պետական վերակառուցման խնդիներ չէին շոշափում5: Այդ կարգի քաղաքական հարցադրումները հայ-թաթարական կոնֆլիկտային հարաբերություններում առկա էին զուտ հնանավորության տեսքով: Գլխավոր քաղաքական նախաձեռնություններն ու նպատակները կոնֆլիկտ էին ներբերվում դրսից (ընդ որում ոչ բացահայտ ձևերով)՝ կոնֆլիկտն ուղղորդող ու վերահսկողության տակ պահող իշխանությունների կողմից, որոնց համար հեղափոխական տրամադրություններով ապրող հայը միապետության համար վտանգավոր տարր էր, իսկ գաղափարախոսական շարժումներից հեռու կովկասյան թաթարը՝ հայերին զսպելու հարմար գործիք:

---

[1] *Հայեր-մուսուլմաններ* երկանդամ կաղապարը մուծելու քաղաքական նկատառումներին մենք անդրադարձել ենք «Ադրբեջանահայությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և Հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում» հոդվածում (տես՝ «Գլոբուս», N 8-9, 2014 թ., էջ 109-166):

[2] Ակնհայտ էր, որ եթե կոնֆլիկտը բորբոքվեր քրիստոնյա հայերի ու մուսուլմանների միջև, այն կընկալվեր որպես կրոնադավանաբանական (քրիստոնեա-մահմեդական) հակամարտություն, որը կայսրության այլ շրջաններում տարածվելու վտանգ կունենար: Բնական է, որ դա ցանկալի չէր կայսրության համար[2]: Նրան ձեռնտու էր զուտ էթնիկական կոնֆլիկտի բորբոքումը, որպիսին դարձան հայ-թաթարական բախումները:

[3] Աշխատավորական վերնախավում և բանվորական հիերարխիայում վճռորոշ դիրքեր գրավող հայերի քաղաքական ակտիվության և դրան ցարական իշխանությունների վերաբերմունքի մասին տես՝ Баберовский Й., Цивилизаторская миссия и национализм в Закавказье: 1828-1914 гг// ab imperio: Новая имперская история постсоветского пространства. Казань, 2004, ինչպես նաև՝ Воровский. Сочинения. Т. 3, м., 1933

[4] Միայն կայսրության վերջին տարիներին նրա քաղաքական վերնախավով սթափության ալիք անցավ, երբ պարզ դարձավ, որ իշխանությունների բարյացկամությունը վայելող թաթարները վարակված են իր համար վտանգավոր ագրեսիվ թուրքականության բացիլով:

[5] Այն, որ այդ տարիներին շոշափվում էին նաև քաղաքական բնույթի հարցադրումներ, էականորեն չփոխեցին հայ-թաթարական բախումների բնույթը: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովն, օրինակ, ցարին ուղարկած իր զեկուցագրերից մեկում առաջարկում էր Ելիզավետպոլի նահանգի արևմտյան շրջաններից, որտեղ հայ ազգաբնակչությունը մեծամասնություն էր կազմում, ձևավորել նոր վարչական միավոր, որպեսզի նրանք ազատվեն նահանգի վարչական մարմիններում խրամատավորված թաթար չինովնիկների կամայականություններից (տես՝ Հրաչիկ Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք V, Երևան, 2013, էջ 486-492):

Երկրորդ: Հայ-թաթարական կոնֆլիկտային հարաբերությունների ցարիզմի շրջանին հատուկ մյուս կարևոր իրողությունն այն է, որ ողջ Արևելյան Անդրկովկասով բռնկված հայ-թաթարական բախումները Ղարաբաղյան հակամարտություն չէին կարող լինել և չեն եղել ոչ իրենց աշխարհագրության, ոչ էլ առարկայի տեսակետից:

Երրորդ: Հայ-թաթարական բախումները էթնիկականից փոխակերպվել են էթնոքաղաքականի հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, երբ կայսրության վարչական վերահսկողությունից դուրս հայտնված տարածաշրջանի քաղաքական օրակարգում դրվել է Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կարգավիճակի հարցը: Պարզ է դարձել, որ Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների մինչ այդ էթնիկական դիմաբախությունների մեջ ներքաշված հայկական ու թաթարական համայնքները տրամագծորեն տարբեր կողմնորոշումներ ունեն ծագած հարցում: Արդյունաբերական Բաքվում գերիշխող դիրքեր ունեցող հայությունը երկրամասը Ռուսաստանից անջատվելու մեջ տեսնելով թուրքական ներխուժման և ցեղասպանության վտանգը, սատար կանգնեց երկրամասի խորհրդայնացման գործընթացին և դարձավ 1917-ին Բաքվում հաստատված խորհրդային իշխանության ազգային հենարանը: Թաթարական համայնքը կողմնորոշված էր դեպի օսմանյան թուրքը: Հայը երկրամասը տանում էր դեպի խորհրդայանացված Ռուսաստան, թուրքը՝ դեպի Օսմանյան կայսրություն: Առճակատումը ծավալվեց միջազգային մի իրադրության պայմաններում, երբ ընթանում էր առաջին աշխարհամարտը: 1917 թ. հոյեմբերին Բաքվում խաղաղ կերպով իշխանության հայտնվելը խորհրուրդների ձեռքում խոսում էր տարածաշրջանում հայկական գործոնի գերակայության մասին:

Երրորդ կողմերի ռազմական ուղղակի միջամտությունը և Արցախյան հարցի միջազգայնացումը 1918-1920 թթ.

Վերը շարադրվածը հավելյալ բացատրությունն է այն բանի, որ Ղարաբաղյան հակամարտությունը սկսվել է 1918 թ. այն բանից հետո, երբ կայզերական Գերմանիայի ռազմական արշավախմբի ուղեկցությամբ Անդրկովկաս խուժած թուրքական բանակը, Բաքու շարժվելու ճանապարհին սրի մատնելով հայկական գյուղերը, Բաքվում ավելի քան երեսուն հազար հայերի սպանդը իրագործելուց և իշխանությունը կովկասյան թաթարներին հանձնելուց հետո շրջվել է դեպի Լեռնային Ղարաբաղ՝ իրեն Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս հայտարարած1 երկրամասը կոտորածներով ծնկի բերելու և արցախահայությանից արհեստածին ԱԴՀ-ին ենթարկվելու համաձայնությունը ստանալու համար: Ցեղասպան զավթիչի այդ հավակնությունները մերժող Լեռնային Ղարաբաղը ինքնապաշտպանական մարտերի մեջ մտավ թուրքերի ու հետո նաև մուսավաթական Ադրբեջանի հետ, որին 1919-ին, արդեն հովանավորում էր Ապշերոնի նավթին աչքադրած և Անտանտի կողմից հատուկ միսսիայով Բաքու մտած Անգլիան2: Սակայն ոչ դաշնակից զորքերի գլխավոր հրամանատարին, ոչ նրան փոխարինած Շատելվորտին, ոչ անգլիացիների կողմից Լեռնային Ղարաբաղում գեներալ նահանգապետ նշանակված արյունարբու Խոսրովբեկ Սուլթանովին չհաջողվեց կոտրել արցախահայության կամքը և ստիպել

[1] 1918-ի հուլիսի 22-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում տեղի է ունեցել Ղարաբաղի (Արցախի) հայության լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը:
Համագումարի օրակարգի հարցերն արդեն իսկ հաստատում էին, որ Արցախը ընտրել է երկրամասի բոլոր հարցերի լուծման պատասխանատվությունը՝ պարենավորումից, հարկահանությունից, ինքնապաշտպանությունից մինչև արտաքին քաղաքականություն:
Համագումարը հավանություն է տվեց Արարատյան Հանրապետության անկապտելի մաս հռչակելու պատգամավորների առաջարկին, բայց հաշվի առնելով դժվար կացությունը, որի մեջ գտնվում էր այն, որոշեց միացման իրագործմանն ուղղորդված քայլերը համատեղել որպես դե ֆակտո անկախ պետություն հանդես գալու քաղաքական ուղեգծի հետ, որի համար և ձևավորեց Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
Ղարաբաղի ժողովրդական կառավարության ընդունած կարևոր որոշումներից մեկը 1918 թ. օգոստոսի 2-ին Գանձակի շրջանի հայկական շրջանները դե ֆակտո անկախ Արցախի մաս հայտարարելն էր:

[2] Թուրքերը որպես Անտանտի կեղծմից պարտված կողմ 1918 հոկտեմբերի 30-ին Մուդրոսում պարտադրված պայմաններով ստիպված էին դուրս գալ Անդրկովկասից: Անհատապես անգլիայի տարաշաշրջանային քաղաքականությունը Անտանտի անունից առաջ էին տանում դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թոմսոնը, այնուհետև նրան փոխարինած գնդապետ Շատելվորտը, որոնք մեկը մյուսի ետևից «վերջնագրեր» էին ներկայացնում Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարներին ու նրա ձևավորած Ազգային խորհրդին մուսավաթական Ադրբեջանի իշխանությունը ընդունելու պահանջով:

նրան ընդունել թուրքական խամաճիկ ԱԴՀ-ի իշխանությունը1: Արցախը դիմագրավեց թե մուսաֆաթական Ադրբեջանի, թե անգլիացիների ճնշումներին, կրեց ցավալի կորուստներ2, բայց մնաց կանգուն մինչև տարածաշրջանում նոր իրավաքաղաքական իրադրության ձևավորումը, երբ 1920 թ. ապրիլին խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակը մտավ Բաքու, տապալեց թուրքական բանակի կողմից հիմնած ԱԴՀ-ն և տեղը հիմնեց նոր պետական կազմավորում Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (Ադր.ԽՍՀ): Ազգերի լիգայի անդամության մերժումը ստացած ԱԴՀ-ն լքեց պատմության թատերաբեմը առանց ճանաչված կամ փաստորեն հաստատված սահմանների:

1917 թ. նոյեմբերից մինչև 1920 թ. ամառն ընկած այդ շրջանում տարածաշրջանում և Լեռնային Ղարաբաղում ծավալված ռազմաքաղաքական գործընթացները, դրանցում թուրքերի, գերմանացիների, անգլիացիների ներգրավվածությունը հանգեցրին Ղարաբաղյան հակամարտության միջազգայնացմանը՝ կոնֆլիտին երրորդ կողմերի անմիջական ռազմական մասնակցության իմաստով

Ղարաբաղյան հարցի կարգավորման միջազգայնացումը 1918-1920 թվականներին

Բայց Ղարաբաղյան հակամարտությունը այդ տարիներին միջազգայնացվեց ոչ միայն ծագած էթնոքաղաքական կոնֆլիկտին երրորդ կողմերի անմիջական զինված մասնակցության փաստով: Միջազգայնացվեց նաև նրա կարգավորման գործընթացը: Թե 1918 թ. հունվարին Փարիզում մեկնարկած խաղաղության խորհրդաժողովը, թե խորհրդաժողովի որոշմամբ 1919 թ. նույն ամսում հիմնված Ազգերի լիգան ղարաբաղյան խնդրին անդրադարձել են Անդրկովկասի նորանկախ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Վրաստանի և ԱԴՀ-ի ճանաչման համատեքստում: Ինչպես հայտնի է, երեք նորանկախ պետություններն էլ դիմել էին Ազգերի լիգային անդամակցելու և նրա անդամ-պետությունների կողմից դե յուրե ճանաչում ստանալու ակնկալիքով:

1919-1920 թթ. Հայաստանի Հանրապետության և ԱԴՀ միջև ծագած տարածքային վեճերը, որոնց առարկան նաև Լեռնային Ղարաբաղն էր, դառնում են Ազգերի լիգայի օրակարգի հարց: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերվող Լիգայի փաստաթղթերից3 առանձնանում է 1920 թ. նոյեմբերի 20-ին ընդունած որոշումը, որով Լիգան հնարավոր չի համարում ԱԴՀ-ն ընդունել իր շարքերը, քանի որ վերջինս չունի հստակ սահմաններ և որ նրա տարածքային հավակնությունները «դարձել են հարևան պետությունների հետ վեճի առարկա» 4: Ընդունելով Հայաստանի Հանրապետության և ԱԴՀ միջև վիճելի տարածքների առկայության փաստը, Լիգան ըստ էության ծագած վեճի պատճառը համարում է Բաքվի անհիմն տարածքային հավակնությունները: Կազմակերպության մեջ տիրապետող դարձած այդ տեսակետը երևում է նաև իրավաքաղաքական իրողությունն արձանագրող որոշման այն դրույթից, որ Ադրբեջանական

[1] Առավելագույնը, որին հասան անգլիացիները Արցախահայության յոթերորդ համագումարի կողմից ԱԴՀ-ի հետ կնքած ժամանակավոր համաձայնագիրն էր: Պատերազմական գործողությունները դադարեցնելու և ուժերը հավաքելու նպատակով համագումարի կողմից մուսաֆաթական Ադրբեջանի հետ կնքված այդ փաստաթուղթով մինչև Փարիզի խաղաղության խորհրդաժողովը Լեռնային Ղարաբաղը իրեն համարում էր ԱԴՀ սահմաններում: Ժամանակավոր համաձայնագրով ադրբեջանական կողմը պարտավորվում էր առանց Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդին տեղյակ պահելու Շուշիիում գտնվող մուսավաթական ուժերի տեղաշարժեր չկատարել: Ինչպես հայտնի է, 1920 թ. ապրիլին արցախահայության իններորդ համագումարը անվավեր հայտարարեց ժամանակավոր համաձայանագիրը՝ այն Բաքվի կողմից խատելու պատճառով և երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: (Ժամանակավոր համաձայնագիրը հենց այդ օրերին կորցրեց իր ուժը նաև այն պատճառով, որ ապրիլի 28-ին Ռուսաստանի XI Կարմիր բանակի կողմից Բաքվում խորհրդային իշխանության հաստատումով ԱԴՀ-ն դադարեց գոյություն ունենալ:

[2] Արցախը հատկապես ծանր կորուստներ ունեցավ 1920 թ. մարտին, երբ մուսավաթականները կազմակերպեցին Շուշիի և հարևան հայկական գյուղերի բնակչության սպանդը:

[3] Հայաստանի Հանրապետության և ԱԴՀ տարածքային վեճելի հարցերի քննարկումներին նվիրված Փարիզի խաղաղության խորհրդաժողովի ու Ազգերի լիգայի արխիվային փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ է բերված Յու. Բարսեղովի խմբագությամբ հրատարակված «Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии» (М., 2008) փաստաթղթերի ժողովածուում (տես՝ նշված ժողովածուի թիվ 572-629 փաստաթղթերը):

[4] Տես՝ Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии. Т. 1. М., 2008, Док. 619, стр. 547.

Հանրապետության ինքնիշխանությունը իր կողմից հավակնող տարածքնեում «դե յուրե չի ճանաչվել Ազգերի լիգայի ոչ մի անդամի կողմից»:

Եվ այսպես, ղարաբաղյան կոնֆլիկտը օրակարգում հայտնվել է թուրքական ռազմական ինտերվենցիայի արդյունքում մինչ այդ ողջ Արևելյան Անդրկովկասի շուրջ ծավալված էթնոքաղաքական վեճի աշխարհագրական նեղացման արդյունքում: 1918-1920 թթ. այն միջազգայնացվել է թե զինված հակամարտությանը երրորդ կողմերի անմիջական մասնակցության, թե նրա կարգավորմանը երրորդ երկրների ներգրավվածության իմաստով:

Հակամարտության միջազգայնացման 1918-1920 թթ. քաղաքական տեսանկյունների ուսումնասիրությանը մեզնում դեռևս չի տրվում այն կարևորությունը, որին այն արժանի է: Այո, մենք սովորաբար ընդգծում ենք Սևրի պայմանագրի և Ազգերի լիգայի վերը նշած փաստաթղթերի հայանպաստ բովանդակությունը և շեշտում «Ղարաբաղյան փաթեթում» դրանց՝ որպես Հայկական հարցին անմիջապես առնչվող փաստաթղթերի, ներգրավման կարևորությունը: Որոշակիորեն այլ ոգով են դրանք վերլուծված արդեն հիշատակված «Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии» (М., 2008) աշխատության երկրորդ հատորում: Սակայն Փարիզի խաղաղության խորհրդաժողովի և Ազգերի լիգայի անդամ-պետությունների Հայաստանի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի քաղաքական շարժառիթները դեռևս խորքային վերլուծության կարիք ունեն: Խնդրի տեսակետից կա ոչ պակաս կարևոր անելիք: Դա Արցախ-Ադրբեջան կոնֆլիկտի միջազգայնացման և կարգավորման XX դարի քսանական թվականների և մերօրյա ձևաչափերի համեմատական վերլուծությունն ու դրանց միջև ընդհանրությունների ու տարբերությունների վերհանումն է: Այն կարող է հիմնախնդրի միջազգային քաղաքական չափման մեջ բացահայտել հարյուրամյա կոնֆլիկտի այնպիսի տեսանկյուններ, որոնք այլ կերպ տեսանել չեն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման 1918-1920 թթ. և հետխորհրդային շրջանի միջազգային ձևաչափերի համեմատական վերլուծություն առաջին մոտարկմամբ

Հարցը լուրջ վերլուծության կարիք ունի: Պահանջվում են որպես երրորդ կողմ կամ միջնորդ հանդիսացող պետությունների տարածաշրջանային շահերի1, ինչպես նաև խնդրի կարգավորումը իրենց հովանու տակ վերցրած միջազգային կառույցների հնարավորությունների խորքային վերլուծություններ: Մենք, ինչպես արդեն նշել ենք, ստորև կսահմանափակվենք առանցքային հարցադրումների առանձնացմամբ և պաշտոնական կամ այլ բաց տեքստերում խնդրին առնչվող (և այդ իմաստով հասանելի) հիմնական փաստերի հակիրճ վերլուծությամբ՝ հետագա ուսումնասիրությունների թիրախային թեմաների ձևակերպման նպատակադրությամբ:

Այն, որ շրջանցվում է Անդրկովկասի խորհրդայնացման ու դրան հաջորդած շրջանը, բացատրվում է հարցի ուրույնությամբ և դրան նվիրված հետազոտությունների առատությամբ2:

---

[1] Նման վերլուծության օրինակ է տրամադրում Ջոն Կիրակոսյանի “Великобритания и армянский вопрос” (Ереван, 1990) աշխատությունը:

[2] Արծարծվող թեմայի համատեքստում այդ շրջանին վերաբերող հոդվածներում իմ կողմից առաջադրված դրույթներից առավել կարևոր են հետևյալները: Առաջին. եթե Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. հուլիսին, մինչև ԽՍՀՄ կազմավորումը, անդրկովկասյան հանրապետությունները համարել է ինքնիշխան պետություններ (ձևականորեն նրանք այդպիսին են եղել), ապա ՌԿ(բ)Կ Կովբյուրոն պետք է դիտարկվի որպես հարցի կարգավորման միջազգային ձևաչափ (մենք վերանում ենք այն բանից, որ հուլիսի 5-ին հարցի քննարկմանը մասնակից պետություններից ոչ մեկը միջազգայնորեն ճանաչված չէր և այն բանից, որ Մոսկվան Խորհրդային Հայաստանի նկատմամբ իրագործած բռնությամբ գործողության մեջ է դրել այդ նիստում իրականում չընդունված «որոշում»): Երկրորդ. Եթե ԽՍՀՄ-ը եղել է ինքնիշխան հանրապետությունների դաշնություն, ինչպես դա Ղարաբաղյան շարժմանը հաջորդած օրերին ներկայացնում էր Մոսկվան, պնդելով, որ Խորհրդային Ադրբեջանի՝ որպես ինքնիշխան պետության սահմանները չեն կարող փոփոխվել առանց նրա համաձայնության, ապա պետք է ընդունվի, որ 1990 թ. ապրիլի 3-ին «Միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքն ընդունած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդը եղել է իրավասու միաջազգային ատյան, որը ճանաչել է ԽՍՀՄ կազմից միութենական հանարապետության դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումների ազգային-պետական կարգավիճակի բարձրացման (ընդհուպ մինչև ինքնիշխան պետություն հիմնելու) իրավունքը: Այդ օրենքը եղել է ինքնավարությունների ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչման ակտ անկախ այն բանից, թե հետագայում ինչպես են միութենական հանրապետությունները հայտնվել ԽՍՀՄ կազմից դուրս:

Հակամարտության կարգավորման դարասկզբի և դարավերջի ձևաչափերի համեմատությունը ՀՀ և Արցախի Հանրապետության իրավասուբյեկտության դիտակետից:

1918-1920-ական թվականներին անկախության համար պայքարող հայ ժողովուրդը չուներ միջազգային հանրության կողմից ճանաչված, միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ հանդիսացող պետություն: Հայաստանի առաջին հանրապետությունը 1920 թ. մայիսին էր դիմել Լիգային՝ կազմակերպության անդամը դառնալու հայցով, սակայն հարցի ձգձգված քննարկումից հետո հայցը մերժվեց այն պատճառաբանությամբ, որ Սևրի պայմանագիրը, որով պետք է որոշվեն նորանկախ Հայաստանի սահմանները, դեռևս վավերացված չէ1: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև Անդրկովկասի մյուս նորանկախ պետությունները՝ Վրաստանն ու ԱԴՀ-ն ճանաչվեցին միայն դե ֆակտո՝ քննարկումից քննարկում անընդհատ հնչեցվող այն վերապահությամբ, որ դե ֆակտո ճանաչումը չի կանխորոշում այդ պետությունների տարածքային վեճերի լուծումը: Նման հարցադրմամբ Լեռնային Ղարաբաղի հարցը Լիգան տեղափոխեց Հայաստանի Հանրապետության և ԱԴՀ տարածքային վեճերի ու սահմանների ճշտգրման հարթություն: Արցախի հարցը Ազգերի լիգայում չի առանձնացվել որպես ինքնուրույն քննարկման առարկա:

Առանձնացված չափանիշի տեսակետից համեմատության մեջ դնելով Արցախ-Ադրբեջան հակամարտության կարգավորման միջազգայնացման 1918-1920-ականների ձևաչափը հիմնախնդրի մերօրյա կարգավորման ձևաչափի հետ, հեշտ է նկատել մի շարք ակնառու տարբերություններ: Ինչ վերաբերում է Հայաստանի երրորդ հանրապետությանը, ապա ի տարբերություն 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության նա պետությունների միջազգային համայնքի՝ ՄԱԿ-ի, լիիրավ անդամ է: Դառնալով Արցախին, առաջին հերթին պետք է ընդգծվի, որ ի տարբերություն Ազգերի լիգայի, ոչ ՄԱԿ-ը, ոչ էլ ԵԱՀԿ-ն, որի հովանու տակ ընթանում է հակամարտության միջազգային կարգավորման գործընթացը, Արցախի հարցը չեն կապում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության տարածքային վեճերի կամ սահմանների ճշտգրտման հետ: Արցախի հարցը միջազգային ատյաններում ամրագրված է որպես կարգավորելու ենթակա ինքնուրույն հարց: Հակամարտության հանգուցալուծման միջազգային գործընթացներում Արցախի ներգրավվածության ձևերը (մասնակցությունը բանակցային գործընթացին, ապագայում տեղի ունենալիք Մինսկի խորհրդաժողովին Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչների մասնակցության մասին ԵԱՀԽ 1992 թ. մարտի 24-ի որոշումը, Ղարաբաղյան պատերազմի արդյունքում Ադրբեջանի զինված ուժերի հետ հաստատված շփման գծի ամրապնդման խնդիրների քննարկումը ԵԱՀԿ-ում և այդ ծրագրերում Արցախի անմիջական մասնակցությունը և այլն) հաստատումն են այն բանի, որ ի դեմս ԵԱՀԿ միջազգային հանրությունը Արցախին դիտում է որպես հակամարտության և նրա կարգավորման բանակցային գործընթացի անմիջական կողմ՝ դրանից բխող իրավական հետևանքներով: Ի դեպ, Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է ճանաչվել հենց Բաքվի կողմից թե հրադարարի մասին 1994-ի մայիսին Բիշկեկում Ստեփանակերտի և Երևանի հետ կնքված համաձայնագրով, թե հրադադարի ռեժիմի ամրապնդման մասին դրան հաջորդած երկկողմ մի շարք փաստաթղթերով: Այն, որ Բաքուն շուրջ տասը տարի հրաժարվում է բանակցային սեղանի շուրջ դեմառդեմ նստել Ստեփանակերտի հետ, իրավական որևէ անդրադարձ չունի կոնֆլիկտի կարգավորման գործընթացում Արցախի ձեռք բերած և միջազգայնացված ճանաչված կարգավիճակի հետ:

Երկարատև ստատուս քվոն դե ֆակտո կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը օբյեկտիվորեն (Բաքվի ցանկություններից անկախ ու դրանց հակառակ) դարձնում է տարածաշրջանային իրադարձությունների գործոն, դրանց բացահայտ կամ անբացահայտ մասնակից-սուբյեկտ2: Եվ դա զարգացման միտում ունի կապված այն բանի հետ, որ

[1] Ընթերցողը խնդրին վերաբեռող նյութերին կարող է ծանոթանալ Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ 1972 թ. Երևանում հրատարակված "Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)", փաստաթղթերի ժողովածուում, ինչպես նաև արդենն հիշատակված «Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии» (М., 2008) փաստաթղթերի ժողովածուի թիվ 572-629 փաստաթղթերում :

[2] 2018-ի փետրվարի 23-ին Երևանում Ղարաբայան շարժման 30-ամյակին նվիրված գիտաժողովում ռուս վերլուծաբան Ստանիսլավ Տարասովը իր ելույթում այն տեսակետն է արտահայտել, որ ԵԱՀԿ հովանու տակ Արցախյան թեմայով ընթացող բանակցություններում նկատվող տեղապտույտը պիտի բացատրել

անընդհատ թափ է հավաքում Արցախի միջազգային ճանաչման գաղափարը: Պետականության բոլոր ատրիբուտներին բավարարող, դե ֆակտո կայացած Արցախն այսօր ճանաչված է ԱՄՆ բազմաթիվ նահանգների, եվրոպական քաղաքաների, կազմակերպությունների ու համայնքների կողմից: Դա միջազգային հարաբերությունների լիարժեք իրավասուբյետության հանգրվանին տանող այն ճանապարհն է, որով անցնում է Արցախը:

Միջազգային իրավունքի տեղը կոնֆլիկտի կարգավորման դարասկզբի և դարավերջի միջազգային ձևաչափերում

XX դարի 20-ականներին Ազգերի լիգայի և մեր օրերում ԵԱՀԿ կողմից կոնֆլիկտի կարգավորման փորձերի տարբերությունների ակնառու ընկալման տեսակետից զուտ դիդակտիկ նկատառումներով հարմար է վերլուծությունը սկսել հիմնախնդրի կարգավորման միջազգայնացման այդ մերօրյա ձևաչափից: Հայտնի է, որ Ղարաբաղյան կոնֆլիկտի ընդհանուր գաղափարախոսության ու ռազմավարության հարցում ՄԱԿ-ի անվերապահ աջակցությունը ստացող ԵԱՀԿ-ը հիմնախնդրի կարգավորման հիմքում դրել է միջազգային իրավունքի երեք սկզբունքներ՝ ժողովուրդների ազատ ինքնորոշման, պետությունների տարածքային ամբողջականության և միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի չկիրառման սկզբունքները: Անկախ տարածքային ամբողջականության և ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքների շուրջ իրավագիտության մեջ առկա տարընմբռնումներից փաստ է, որ ի դեմս ԵԱՀԿ-ի միջազգային հանրությունը բոլոր հնարավոր վերապահումներով հաղթձ գոնե արտաքուստ փորձում է խնդրի հանգուցալուծման տարբերակները գտնել միջազգային իրավունքի՝ և հենց վերը նշված սկզբունքների շրջանակներում1: Ասում ենք «գոնե արտաքուստ», քանի որ առաջին երկու սկզբունքների՝ իրենց «բնական իմաստից» շեղված մեկնաբանությունները, որոնց դիմում են ԵԱՀԽ Մինսկի խմբի համանախագահները, կարգավորումը մտցնում են իրավական փակուղի և քաղաքական ստատուս քվոի (իմա՝կոնֆլիտի սառեցման) դաշտ: Սակայն դա չի փոխում հիմնարար այն իրողությունը, որ միջազգային հանրությունը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը, թող որ վիճարկելի ձևերով, ներգրավել է միջազգային իրավունքի նշված երեք սկզբուբնքները: Ավելին, դրանցից երրորդը՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը, ԵԱՀԿ-ը դիտում է որպես հակամարտության հանգուցալուծման պարտադիր պայման և տարընմբռնումներ չի տեսնում նրա մեկնաբանության մեջ: Հրադադարի ռեժիմի պահպանման հարցի պարբերական քննարկումները և դրան ուղղված ԵԱՀԿ գործնական ջանքերը այդ մասին են վկայում:

Միջազգային իրավունքի ներգրավման տեսակետից Ստեփանակերտ-Բաքու կոնֆլիկտի կարգավորման միջազգայնացման մերօրյա և XX դարի քսանական թվականների իրողությունների համեմատությունը բացահայտում է էական մի շարք տարբերություններ: Անցյալ դարի քսանականներին չկար միջազգային իրավունքի մշակված այն համակարգը, որ այսօր ունեն ՄԱԿ-ը և նրա Կանոնադրությանը հետևող ԵԱՀԿ-ը: Խոսքն առաջին հերթին ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքին է վերաբերում, որն անցյալ դարասկզբին սոսկ կայացող և դեռևս չհստակեցված գաղափար էր, բայց որն այսօր որպես միջազգային հարաբերությունների հիմնարար սկզբունք դրված է Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման հիմքում2:

տարածաշրջանային նոր նախագծերով, որոնցում Արցախին որոշակի դերակատարություն է նախատեսված: Չբացառելով նման հնարավորություն, հայկական կողմերը պետք հաշվի առնեն, որ երկատև ստստուս քվոն կարող է նաև բացատրվել գլոբալ դերակատարների տարածաշրջանային ռազմաքաղաքական հավասարակշռության փաստով, որի դեպքում կոնֆլիկտի կարգավորման ձևաչափի ներքին հակասականությունը դառնում է ստստուս քվոյի պահպանման ձևական պատրվակ կամ հիմնավորում:

[1] Միջազգային իրավունքի՝ կոնֆլիկտի կարգավորման մեջ ներգրավված հիշյալ սկզբունքների տարբեր մեկնաբանությունների հարցը ինքնուրույն անդրադարձի նյութ է: Տեսական վեճերի հանգույցում հայտնված խնդիրն այն է, որ որոշ մասնագետներ հակասություն են տեսնում տարածքային ամբողջականության ու ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավական սկզբունքների միջև, երբ իրականում նման հակասություն չկա: Չխորանալող հարցի իրավական նրբությունների մեջ, «մտածողության ազատ ոճի» շրջանակներում նկատենք, որ ինքնորոշման ակտերով են որոշվում պետությունների տարածքները, ի ցույց դնելով իրանց առաջնայնությունը անընդհատ փոփոխվող սահմանների նկատմամբ:

[2] Հատկանշական է, որ Ազգերի լիգայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ահարոնյանը կազմակերպությանը հղած իր գրություններում, որոնցում տալիս էր Լիգային Հայաստանի Հանարապետության անդամակցության հիմնավորումները, անընդմեջ շեշտում էր աշխարհագրական այն

ՄԱԿ-ի կողմից ընդունված փաստաթղթերում ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը սահմանված է հստակ: «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»,- այս հոդվածով է սկսվում ՄԱԿ-ի անդամ-պետությունների կողմից 1966 թ. դեկտեմբերին ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը»1: Նույն հոդվածի երրորդ կետով Դաշնագիրը ստորագրած պետությունները պարտավորվում են, որ պետք ՝է«Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը»: 1966-ին ապագաղութացման գործընթացների բուռն ծավալման շրջանում ՄԱԿ-ի անդամ պետությունները ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի մասին արձանագրել են տարընթերցումներ բացառող և պարտադիր-հրամայական բովանդակության դրույթ: Ընդամենը մեկ տասնամյակ անց, երբ ժողովուրդների ինքնորոշման ահագնացող ալիքը սպառնում էր վարակել բազմազգ պետությունների ոչ տիտղոսակիր ժողովուրդներին, ՄԱԿ-ի Կանոնադրության տակ իրենց ստորագրությունը դրած անդամների մի զգալի մասը (առաջին հերթին բազմազգ պետությունները) այդ հարցում դարձան ավելի զգուշավոր: 1975-ին Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի (հետագայում՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն) կողմից ընդունված «Հելսինկյան եզրափակիչ ակտում2», այդ սկիզբունքները ամփոփվեցին մեկ փաթեթում՝ որպես նույն խնդրի նկատմամբ համաժամանակյա գործադրման հավասարազոր սկզբունքներ: Սկզբունքների փաթեթային կիրարկման այդ մեթոդը թույլ տվեց տրոհման վտանգից խուսափաղ բազմազգ պետություններին իրենց համար անցանկալի դեպքերում անհաղթահարելի հակասություն տեսնել ժողովուրդների ազատ ինքնորոշման ու պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների միջև: ՄԱԿ-ի կանոնադրության մեջ իմպերատիվ և համընդհանուր իմաստ ունեցող ինքնորոշման սկզբունքը գլոբալ դերակատարների համար դարձավ քաղաքական նպատակահարմարության ենթակա և այդ չափանիշով իրավիճակային գործադրման սկզբունք3: Ժողովուրդների ազատ ինքնորոշման հարցում ՄԱԿ-ի Կանոնադրությունը և ԵԱՀԽ/ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտը որոշակիորեն տարամետ (նույնիսկ միմյանց հակասող) փաստաթղթեր են, փաստ, որ արդի աշխարհի ներքին հակասականության արտացոլումն է: Այո, դա այդպես է: Սակայն դրանով հանդերձ պետք է նկատվի, որ միջազգայինն իրավունքի նշված սկզբունքների տարընթերցումները միայն հայկական կողմի համար չեն աննպաստ: Եթե դրանք արգելքներ են, ապա այդպիսիք են նաև Բաքվի համար, որն անընդհատ քարոզում է ինքնորշման նկատմամբ տարածքային ամբողջականության անվերապահ գերակայության իր համար ձեռնտու գաղափարը, չնկատելով կամ չցանկանալով նկատել, որ այդ սկզբունքների իրավիճակային մեկնաբանության մենաշնորհը Կոսովոյի դեպքով անթաքույց ձևով իրենց իրավասությանը թողած խոշորները բանի տեղ չեն դնում իր կարծիքը: Ավելին, Արցախի դեպքում ԵԱՀԿ կողմից Բաքվի քարոզչական արշավների անտեսումը գործնական հաստատումն են այն բանի, որ խոշոր տերությունները ղարաբաղյան հարցում սեփական շահերի մղումով շարժվող և Բաքվի «ճնշմներին» անտարբեր Ադրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականությունը չեն դիտում որպես հիմնախնդրի հանգուցալուծման միակ իրավական գործիք: Հիմնախնդրի կարգավորման հիմքում դրված

փաստը, որ Լեռնային Ղարաբաղը Հայկական լեռնաշխարհի մաս է՝ փոխանակ ընդգծելու ինքնորոշման այն ակտերը, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անունից ընդունել են նրա լիազոր ներկայացուցիչների համագումարները:

[1] Տես՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347

[2] Տես՝ https://www.osce.org/hy/mc/39507?download=true

[2] Կոսովոյի անկախությունը ճանաչած արևմտյան տերությունները շրջանառության մեջ դրեցին իրավական դաշտից դուրս գտնվող «հատուկ դեպք» հասկացությունը, որը բացեց առանց այն էլ հստակեցման կարիք ունեցող միջազգային իրավունքի սկզբունքների կամայական մեկնաբանման հնարավորությունների լայն դաշտ:

[3] Բանն այն է, որ Բաքուն հայկական կողմերին պարտադրել է լայնածավալ տեղեկատվական պատերազմ, որին մենք դեռևս համարժեքորեն չենք պատասխանում: Դեռևս ցավալիորեն աղքատ է Ղարաբաղյան կոնֆլիկտի հետ կապված քաղաքական մեր փաստարկների փաթեթը:

սկզբունքների կոնֆլիկտային մեկնաբանությամբ նրանք քաղաքականացրել են դրանք՝ տարաբնույթ գործադրման հնարավորություններ ներդնելով դրանց մեջ: Բայց նույնիսկ այդ պարագայում նրանք առայժմ ստիպված են հաշվի նստել իրենց իսկ կողմից կարգավորման հիմքում դրված սկզբունքների հավասարազորության հետ, որն իր մեջ ունի կարգավորման ձգձգման ու ստատուս քվոյի երկարատև պահպանման (իմա՝ խնդրի սառեցման) «իրավունքով արդարացվող հնարավորություն»: Նկատել է պետք, որ դա կողմերի համար հնարավորությունն է կարգավորման գործընթաց ներբերել ոչ իրավական բնույթի գործոններ: Այդ ոլորտում Բաքվի գործունեության հիմնական ուղղությունները, ինչպես հայտնի է, սպառազինվելն ու միջազգային կառույցների կոռուցիոն հակառումներ ունեցող չինովնիկների հավաքագրումն է: Ռազմատնտեսական խնդիրներից բացի մեր առջև ծառացած կենսական հարցերից մեկը հիմնախնդրի բուն էությանը համապատասխանող տեղեկատվական ու քաղաքական կերպարի աստիճանական ու հետևողական ներդրումն է միջազգային հանրային գիտակցության մեջ 1 :

Ղարաբաղյան հիմնախնդիրը XX դարի քսանականների և հետխորհրդային շրջանի համաշխարհային ուժադաշտում

Այս առումով ևս դիտարկվող ձևաչափերի համամատական վերլուծությունը բացահայտում է հետաքրքիր փաստեր: Ինչես նշվել է վերը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին Ազգերի լիգան անդրադարձել է Հայաստանի առաջին հանրապետության և ԱԴՀ-ի տարածքային վեճերի համատեքստում այն ժամանակ, երբ նորանկախ Հայաստանի Լիգայի անդամ չէր: Արցախը Լիգայում ընդամենը վեճի առարկա տարածք էր: ԱԴՀ-ն ուներ իրեն հիմնած բարեկամ պետություն, որը ռազմական ուղղակի աջակցություն էր տրամադրել իրեն: ԱԴՀ-ին անթաքույց պաշտպանում էր Անգլիան, երբ Բաքու էր մտել այդտեղից թուքերի դուրս գալուց հետո: «Առօրյա տրամաբանությունը» հուշում է, թե Անգլիայի համակրանքը պիտի Հայաստանի՝ «իր փոքրիկ դաշնակցի» , այլ ոչ թե Անտանտի թշնամի Օսմանյան բանակի հիմնած ԱԴՀ-ի կողմը լիներ: Բայց «նավթի տարամաբանությունը» Լոնդոնին այլ ուղիով տարավ: Նա ջանք չխնայեց Բաքվում մնացած ամիսներին պարտադրել Արցախին ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին և չսահմանափակվեց դրանով: Ազգերի լիգայում տեղի ունեցած քննարկումների2 արձանագրությունները ցուց են տալիս, թե ինչպիսի հետևողականությամբ է Լոնդոնը շարունակել աջակցել Բաքվին՝ այս անգամ դեպի խորհրդային Ռուսաստանը թեքված «Թուրքիային ետ բերելու» և նրան իր ազդեցության ոլորտում պահելու համար: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Լոյդ Ջորջը իր հուշերում պիտի խոստովաներ, որ այդ գործարքների գինը Հայաստանի զոհաբերությունն էր հաղթող տերությունների կողմից3: Ազգերի լիգայում Հայաստանին ցուցաբերվող աջակցությունը նրան փրկելու անպտուղ կոչերից այն կողմ չանցավ: Լիգան այդ կազմակերպության անդամակցության ԱԴՀ-ի հայտը մերժեց 1920 թ. նոյեմբերի 20-ին, երբ՝ ապրիլին խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակի Բաքու մտնելուց և այնտեղ նոր պետություն հիմնելուց հետո այն արդեն գոյությունը չուներ: Իր տրամադրության տակ չունենալով ուժային կառույցներ, Լիգան պիտի դիմեր անդամ-պետություններից որևէ մեկին խնդրանքով իր վրա վերցնել Հայաստանի պաշտպանության առաքելությունը: Ահգլիան դա չէր անի: Դա չարեց նաև Սևրի պայմանագրով Թուրքիայի հետ ապագա Հայաստանի սահմանները որոշած պետությունը՝ ԱՄՆ-ը: Ազգերի լիգայի անգործունակությունը ի վերջո հաստատվեց 1920 թ. նոյեմբերին Երևանում խորհրդային կարգերի հաստատումով, իսկ 1923-ին՝ Լոզանում ցեղասպան Թուրքիային ներում շնորհելով:

Այս փաստերի համադրումը Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման մերօրյա ձևաչափի հետ բացահայտում է այն մեծ ճանապարհը, որ ցեղասպանությանը հաջորդած XX -րդ դարի յոթ տասնամյակում անցել է հայ ժողովուրդը և հերոսամարտերում կոփված արցախյան նրա հատվածը: Եթե արցախահայությունը զինված պայքարով չդիմագրավեր Անդրկովկաս մտած

[2] Ընթերցողը դրանց կարող է ծանոթանալ Нагорный Карабах в международном праве и мировой политике: документы и комментарии» (М., 2008) փաստաթղթերի ժողովածուի թիվ 572-629 փաստաթղթերում

[3] Այդ խոստովանությունը նա կատարել է առաջին աշխարհամարտի արդյունքների միջազգային կարգավորման հաղթող տերությունների բանակցային գործընթացներին նվիրված իր աշխատության մեջ: Տես՝ Ллойд Джордж, Правда о мирных договорах. В 2-х томах, М., 1957

թուրքերի, անգլիացիների, մուսավաթական Ադրբեջանի՝ Արցախը ծնկի բերելու փորձերը, եթե նա ընկրկեր 1988-1991 թթ. կենտրոնական իշխանությունների քաղաքական ճնշումների առաջ և «Օղակ» պատժիչ գործողության առաջ, եթե նա ԽՍՀՄ լուծարումից հետո չպատռեր շրջափակման օղակը և հայոց աջակցությամբ չազատագրեր իր պատմական հայրենիքի այն մասը, որում այսօր պետական իշխանություն է իրագործում Արցախի Հանրապետությունը, կոնֆլիկտը չէր լինի կարգավորման միջազգային այն ձևաչափում, որում այսօր այն գտնվում է: Իր քաղաքական չափման մեջ այդ ձևաչափը, իհարկե, անբացահայտ քաղաքական ծալքեր ունի, ուր պետք թափանցի մեր քաղաքականն միտքը: Սակայն ակնհայտ է, որ արցախահայության հերոսական պայքարի արդյունքում արցախյան հիմնախնդիրը որակապես այլ միջազգային կարգավիճակ ունի, քան այն ունեցել է Ղարաբաղյան շարժումից ընդամենը յոթ տասնամյակ առաջ: Դա հաստատվում է նրանով, որ

արցախյան հիմնախնդիրը չի դիտվում որպես երկու հարևան պետությունների վիճելի տարածքի հարց, ինչպես եղել է 1918-1920 թվականներին; միջազգային հանրությունն այսօր այն դիտում է որպես կարգավորման ինքնուրույն խնդիր;

ի դեմս միջազգային հանրության լիիրավ անդամ Հայաստանի Հանրապետության Արցախն ունի իր անվտանգության երաշխավոր պետություն, որպիսին չի ունեցել 1918-1920-ական թվականներին;

արցախյան կոնֆլիկտի կարգավորման հարցը բացահայտ անգործունակ միջազգային կազմակերպության հովանու տակ չի գտնվում, որպիսին եղել է Ազգերի լիգան;

ի դեմս Մինսկի խմբի համանախագահող պետությունների եռյակի՝ (ԱՄՆ-ի Ռուսաստանի և Եվրոպան ներկայացնող Ֆրանսիայի), արցախյան խնդրի շուրջ հետխորհրդային շրջանում ձևավորվել է գլոբալ ռազմաքաղաքական հավասարակշռության դաշտ՝ ստատուս քվոյի երկարատև պահպանման հնարավորությամբ, ինչը չի եղել 1918-1920-ականներին;

որպես դե ֆակտո կայացած պետություն, Արցախի Հանրապետությունը անկախությանը հաջորդած շուրջ քառորդ դարի ընթացքում ապացուցել է իր կենսունակությունը, եվրոպական ամենաբարձր չափանիշներով ժողովրդավարության սկզբունքներին իր հավատարմությունը; դրանով է բացատրվում Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գաղափարի տարածումը արտերկրի հասարակական ու քաղաքական շրջանակներում:

Նշված փաստերն ապացույցն են այն բանի, որ պատմական ժամանակը աշխատում է Արցախի օգտին: Մեր պարտքն է նպաստել պատմությանը իր այդ միտումներում: